ձանագրութիւններ ԺԲ. դարից:

Դեռ աւելի. նոյն պատմագիրը, ինչպէս նաեւ Սէրգէյ Գլինկան բերում են ուրիշ բազմաթիւ վաստեր եւս, որոնք անհերքելիօրէն ապացուցանում են, որ շատ կանուխ ժամանակներից հայերը կարեւոր մասնակցութիւն են ունեցել Ռուսաստանի վաճառականութեան մէջ: «Բոլգարական մայրաքաղաքում — ասում է Կարամզինը — հայ վաճառականները փոխանակում էին ռուսական մորթիներն ու կաշիները պարսկական եւ ուրիշ ապրանքների հետ»1):

Հայ առեւտրականների նշանակութիւնը Ռուսաստանում աւելի է բարձրանում մանաւանդ այն ժամանակներից, երբ սկսում է կազմակերպուել բուն ռուսական պետութիւնը, այն է՝ Կիեւի մեծ իշխանների օրերից: Նրանք, Կիեւի մեծ իշխանները, թանդ գնահատելով հայ վաճառականների դերը Ռուսաստանի տընտեսական յառաջադիմութեան ասպարէզում, զանազան արտօնութիւններ էին շնորհում նրանց: Իսկ առեւտուրը սիրում է ազատութիւն եւ զարգանում է այնտեղ, ուր այդ ազատութիւնը նա ունի:

Եւ հայ վաճառականները դիմում էին Ռուսատան ու այնտեղ հաստատուում:

ԺԱ. դարում հայերի թիւն ու ազդեցութիւնը Ռուսաստանում արդէն այնքան մեծ էր, որ ո՛չ միայն իշխանական պալատներում հայ բժիշկներն ու պաշտօնեաները կարեւոր դեր էին կատարում, այլ եւ հայերն ունէին իրենց քարաշէն եկեղեցին Կիեւում եւ ընդարձակ հողերն ու կալուածները զանազան տեղերում:

Հայ վաճառականների գիրքը Ռուսաստանում է՝լ աւելի է զօրանում յատկապէս Ռոմանովների օրով: Ռոմանովեան տան բոլոր լուսամիտ միապետները խրախուսում էին հայ վաճառականներին եւ ամէն կերպ հովանաւորում: Այսպէս, դեռ 1626 թուից, Ռոմանովեան հարստութեան հիմնադրի օրերից, հայ վաճառականները երկար ժամանակ զտնուում էին կառավարութեան հովանաւորութեան ներքոյ եւ նրա պաշտպանութեամբ իրենց գործերը վարում:

Կրկնում ենք՝ հայ վաճառականները, շատ վաղ ժամանակներից հետ, առեւտրական յարաբերութիւններ ունէին Ռուսաստանի հետ. բայց հայ ժողովուրդը, բացի Յակոբ Զուղայեցու այն մէկ հատիկ դէպքից, քաղաքական որեւէ ծրագիր կամ նպատակ Ռուսաստանի հետ կապուած՝ դեռ չէր ունեցել:

2.

Հայերի քաղաքական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ ծրագրօրէն եւ հետեւողականօրէն սկսում են Պետրոս Մեծի օրերից: Ուրիշ խօսքով՝ 18-րդ դարի սկզբներից հայ քաղաքական միտքը երես է դարձնում Արեւմուտքից եւ որդեգրում է ռուսական օրիենտացիան, որը — կարելի է ասել — դեռ մինչեւ այսօր էլ հայ ժողովուրդի դէթ մի խոշոր մասի համար քաղաքական դաւանանքի հիմք է կազմում:

Ինչպէս գիտենք, Ռուսաստանը վաղուց ի վեր, դեռ այն ժամանակներին, երբ նա տակաւին իր բնական-ազգագրական սահմանների մէջ էր ամփոփուած, ձգտում էր դէպի Կասպից ծովը: Դրա պատճառը մասամբ աշխարհակալական էր, բայց աւելի՝ տնտեսական-առեւտրական: Ռուսական առեւտրի եւ արդիւնաբերութեան զարգացման տեսակէտից՝ մէկ հրամայական անհրաժեշտութիւն էր Կասպից ծովի դրաւումը կամ «ռուսականացումը»:

Այդ քաղաքականութեան ամենացայտուն ներկայացուցիչը հանդիսացաւ Պետրոս Մեծը:

Հասկանալի է, որ ռուսական շահերը պահանջում էին ամէն կերպ պաշտպանել ու սիրաշահել Կովկասի երկու քրիստոնեայ ժողովուրդներին — հայերին ու վրացիներին — որոնց աջակցութիւնը այս գործում չափազանց կարեւոր էր Ռուսաստանի համար:

Ու հեռատես Պետրոս Մեծը անմիջապէս իր հայեացքն ուղղեց դէպի հարաւ եւ յատուկ ուշադրութիւն դարձրեց այդ երկու ժողովուրդների վրայ: Նա ամէն կերպ աշխատում էր կապել նրանց Ռուսաստանի հետ, անդամ ազատագրութիւն խոստանալով մահմեդական լծից:

---

1) Կարամզին, «Պատմութիւն ռուսական թագաւորութեան», III. եր. 206. Ս. Գլինկա, «Էջեր հայ ժողովուրդի պատմութենէն». մեր յօդուածը՝ «Մէկ նշանաւոր հարիւրամեակ», «Հ.», 1929: